

ԼՐԱՏՈՒ

ԹԻՒ 3 - ՄԱՐՏ 2023



70 տարիէ աւելի՝ Սերունդներու Հայեցի Դաստիարակութիւն



Տնօրէնութեան Խօսքը



Կրթութիւնը՝ համատեղ յանձնառութիւն մըն է նուիրեալ ուսուցիչներու, խրախուսուած ուսանողներու և մեծ ակնկալիքներով եռանդուն ծնողներու միջեւ:

Մեր վարժարանը ակադեմական գերազանցութեան հասնելու ձգտումէն բացի, նաեւ կը խրախուսէ ուսանողները քննադատօրէն մտածելու եւ ըլլալու ստեղծագործ անձեր այս յարափոփոխ աշխարհին մէջ:

Լիբանանահայ ինքնութիւնը, քաղաքացիութեան արժէքները եւ մեծ երազելու իրաւունքը Վահան Թէքէեան Միջն. վարժարանի հիմնական նպատակներն են, որ կը տրամադրուի համապատասխան կրթութիւն, շեշտը դնելով ուրիշներու հանդէպ կարեկցանքի զգացողութեան և շրջակայ միջավայրի իրազեկման վրայ:

Մեր անխոնջ ու նուիրեալ ուսուցիչները հեզասահ նաւարկութեան կը պատրաստեն մեր աշակերտները, յաղթահարելու համար աշխարհի բոլոր մարտահրաւերներուն՝ սկսեալ ուսանողական կեանքէն, դառնալու համար արժանաւոր քաղաքացիներ իրենց միջավայրին: Իրաքանչիւրս՝ ծնողք եւ ուսուցչակազմ միասնաբար համագործակցելով, մեր զաւակներուն համար պիտի կերտենք պայծառ ապագայ:

Մեր վարժարանի լրատուն՝ տեղեկութիւններ ստանալու հիանալի միջոց մըն է: Այստեղ, անպայման դուք լիարժէքօրէն կը ծանօթանաք մեր վարժարանի գործունէութիւններուն եւ նուաժումներուն մասին: Վստահ եմ, որ մեր ուսանողներուն ցուցաբերած դրական վերաբերմունքը, կայուն ջանքերը եւ նորարարական գաղափարները, դրական գնահատմամբ պիտի խթանեն ընթերցողներուն միտքը:

Առիթէն օգտուելով, կ'ուզեմ իմ խորին շնորհակալութիւնս յայտնել Թէքէեան Մշակութային Միութեան Հիմնադիրու Մարմնին, ինչպէս նաեւ մեր վարժարանի Հոգաբարձութեան եւ Կրթական Խորհուրդին, անոնց անվերապահ ու անվերջ նուիրուածութեան եւ հոգատարութեան համար:

Երախտագիտութեան յատուկ խօսք կ'ուղղեմ նաեւ, մեր վարժարանի վերելքին սատար հանդիսացող շնորհաշատ բոլոր բարերաններուն, ի մասնաւորի մեր հովանաւորներուն՝ Տէր եւ Տիկին Սէմ եւ Սիլվա Սիմոնեաններուն, իրենց ցուցաբերած անսակարկ նուիրուածութեան, բազմապատասխան ջանքերուն եւ շարունակական աջակցութեան համար:

Մեր սիրելի ուսանողները՝ առողջ մտածելակերպով թո՛ղ առաջնորդուին, ընդլայնեն իրենց գիտելիքներու եւ հմտութիւններու հորիզոնները ու դառնան իրենց երկրին հաւատարիմ եւ պատասխանատու քաղաքացիներ:

Երախտագիտութեամբ՝
Սեանա Սեմերձեան Տարագձեան
Տնօրէնուհի

Փետրուար 28, 2023



Ամփոփ տեղեկագիր մեր ծրագիրներուն եւ գործունէութիւններուն

Վերամուտ Նախակրթարանի եւ Միջնակարգի



Մանկապարտէզի Վերամուտ






Կրթական Գործունեություններ

STEAM Արհեստավարժական Ուսումնական Ծրագիր

Շարունակեցինք ներառել Անգլիական SAM labs-ի "STEAM" ծրագրի գործածությունը համագործակցաբար Professional Learning Center-ի հետ: Մեր աշակերտները կը սորվին նաեւ եռաչափ (3D) տպիչի աշխատանքին եւ գործածութեան ձեւերը:





Գիտական Փորձարկումներ

Յունուար 9 2023 ին, մեր աշակերտները դիտեցին և մասնակցեցան բազմաթիվ գիտափորձերու՝ զարգացնելու համար իրենց վերլուծական մտածողությունը և ստեղծագործական ունակությունները: Ի վերջոյ, գիտությունը կեանքի ծանապարհն է:





Երկրաշարժի Իրազեկման Դասապահ

22 Փետրուար 2023-ին, Վահան Թեքեան վարժարանի աշակերտները հնարաւորութիւն ունեցան լսելու եւ դիտելու Օրդ. Սինթիա Միլատէնեանի կողմէ պատրաստուած՝ երկրաշարժին իրազեկման մասին թատրոն մը եւ սահիկներու ներկայացում:



Նկարագիրի Կրթութեան Ծրագիր



Ինքնավստահութիւն



Պատասխանատվություն



Վերամշակման Դասընթացը

Յունուար 17, 2023-ին մեր նախակրթարանի եւ միջնակարգի աշակերտները ներկայ գտնուեցան "վերամշակման" մասին դասընթացի մը, կազմակերպուած ReFuse կազմակերպութեան կողմէ:





Ուսուցչի Վերադրակաւորում

Հայկազեան Համալսարանի նախաձեռնութեամբ, Հոկտեմբեր 2022-ին Երեւանէն Պէյրութ կը ժամանեն Հայոց Պատմութեան քննական դասաւանդման մեթոտաբանութեան երկու մասնագէտներ: Սոյն ծրագրին իրենց մասնակցութիւնը բերին Տիկ. Ռիթա Թամուկեան եւ Տիար Աւետիս Տիպան:



Նոյեմբեր 4, 2022-ին մեր վարժարանին Պարսամեան սրահին մէջ տեղի ունեցաւ Անգլերէնի նոր մեթոտաբանութեամբ շարադրութիւն գրելու վերապատրաստման աշխատանք մասնակցութեամբ մեր վարժարանի Անգլերէն լեզուի ուսուցչուհիներուն: Սոյն աշխատանքը վարեց Անգլերէն լեզուի մասնագիտուհի Տիկ. Նայիրի Պապուժեան Պուլաքճեան՝ որ նաեւ մեր վարժարանի Հոգաբարձութեան նոր անդամ է:



Ճիշդ Հնչենք

Յունուար 26, 2023-ին , տեղի ունեցաւ ճիշդ հնչենք մրցոյթը Անգլերէն լեզուով, Նախ Ա Բ Գ դասարաններուն: Աւարտին՝ յաղթող մասնակիցները արժանացան յատուկ գնահատագիրներու:





Մշակութային Տօներ

Թարգմանչաց Տօն

Ներդպրոցական հայ լեզուի ու մշակույթի տոնակատարություններու ծիրեն ներս, 15 Հոկտեմբեր, 2022-ին Պարսամեան սրահին մէջ տեղի ունեցաւ Թարգմանչաց Տօնի աշխօով միջոցառում:



Լիբանանի Անկախութեան տօն

Մեծ խանդավառութեամբ տօնեցինք Լիբանանի Անկախութեան տօնը Նոյեմբեր 21, 2022-ին:





Վարդանանց Տօն

15 Փետրուար 2023ին, Պէյրութի Թէքէեան Մշակութային Միութիւնը մեծ շուքով տօնեց Վարդանանցը Վահան Թէքէեան Վարժարանէն ներս:





17 Փետրուար 2023ին, Վարդանանց Տօն-ի առիթով ունեցանք հիւր բանախօս Հոգեշնորհ Տէր Ազատ Արլ. Ֆիլիքեան:



Տարբեր Տոնակատարություններ

Ոտնագնդակի Աշխարհի Գալաթի Ախոյանություն

Ուրբաթ, 28 Հոկտեմբեր, 2022-ին մեր վարժարանի սաները ունեցան միջդասարանային ոտնագնդակի մրցաշարքեր: Խումբերը իրենց դասընկերներուն և ուսուցիչներուն դիմաց ցուցադրեցին արդար խաղ և մարզական բարձր տրամադրություն:



Պրպարա

Դեկտեմբեր 5, 2022-ին ունեցանք դասարանային ատենամարզանք Պրպարա





Սուրբ Ծնունդի եւ նոր Տարւան բարձր տրամադրութիւն դպրոցէն ներս

Կաղանդի նախօրեակին մեր վարժարանին մէջ կը բուրբեր կաղանդի մթնոլորտ:



Դեկտեմբեր 22, 2022-ին մեր վարժարանին մէջ ունեցանք Կաղանդի յիշարժան տօնակատարութիւն:

Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք Թէքէտանցի հպարտ շրջանաւարտներ՝ Օրդ. Անի եւ Թալին Աւագեաններուն, որոնց բարի կամեցողութեան, ձեռք մեկնելու պատրաստակամութեան, սիրոյն եւ սրտաբոլի նուիրատուութեան շնորհիւ իրականացաւ այս բոլորը:





Աշակերտի Տպառուրթին:

Դեկտեմբեր 22, 2022-ին, Կաղանդ պապուկին գլխարկը դրած գացի դպրոց: Երբ զանգը հնչեց մեր դաստիարակներուն հետ եկեղեցի գացինք: Հոն քահանայն մեզի բացատրեց Սուրբ Ծնունդի մասին, ապա աղօթեցինք: Դպրոց վերադարձին սրահ բարձրացանք: Այդ օր շատ գեղեցիկ էին սրահին Ամանորեան զարդարանքները: Համեղ ուտեստեղէն հրամցուեցաւ մեզի: Իսկ ամէնէն հաճելին բամպակաշաքարի պատրաստութիւնն էր, զորս հետաքրքրութեամբ դիտեցինք, ապա իւրաքանչիւր աշակերտ ախորժակով կերաւ իր նախասիրած գոյնի բամպակաշաքարը: Յետոյ Ամանորեան երգերու ընկերակցութեամբ խանդավառութեամբ պարեցինք: Վերջապէս Կաղանդ պապուկը եկաւ եւ իր բերած նուէրներով շատ ուրախացուց մեզ: Այդ օր ուրախ - զուարթ գացի տուն: Մտածեցի, թէ երբ մեծնամ, Կաղանդին՝ Վահան Թէքէեան Վարժարանի բոլոր աշակերտները պիտի ուրախացնեմ, այնպէս ինչպէս ըրին մեր սիրելի բարերարուհիները:

Մարտիրոս Մէթիւ Իշխանեան
Նախ.Դ



Սամարիդըն Բըրս, Samaritan's Purse

13 Փետրուար 2023-ին, մեր վարժարանը հիւրաբար գտնուեցաւ, Samaritan's Purse կազմակերպութենէն խումբ մը երիտասարդներ:



Բարեկենդան

17 Փետրուար 2023-ին, մեր վարժարանի մանկապարտէզի փոքրիկները խանդավառ մթնոլորտով մը տօնեցին բարեկենդանը:





Կրթական և Մշակութային Պտոյտներ

Յովհաննէս Պօղոսեան Թատերասրահ

15 Դեկտեմբեր 2022-ին, Նախ.Ա.-էն Միջն. Գ. դասարանի աշակերտները իրենց դաստիարակներուն ընկերակցութեամբ՝ ուղղուեցան "Յովհաննէս Պօղոսեան" թատերասրահ՝ ներկայ գտնուելու Համազգայինի երաժշտախառն թատերգութեան:



Արամէ Արուեստի Պատկերասրահ

20 Փետրուար 2023-ին, մեր վարժարանի Միջնակարգ դասարանի աշակերտները առիթ ունեցան այցելելու Արամէ արուեստի պատկերասրահը, որ կը գտնուի Պէյրութի, ժամէյգէ շրջանի, Թէքէեան Կեդրոնի շէնքին մէջ: Այցելութեան ընթացքին անոնք ծանօթացան զանազան հայ արուեստագէտներու:

Մեր անկեղծ շնորհակալութիւնը կը յայտնենք Տիար Միքայէլ Վայէճեանին՝ մեզի համար նման հնարաւորութիւն ընձեռնելու համար: Ինչպէս նաեւ մեր երախտագիտութիւնը կը յայտնենք Տիար Արմէն Վայէճեանին՝ մեր ուսանողներուն արուեստի տարբեր առանձնայատկութիւններու վերաբերեալ մանրամասն բացատրութիւն տրամադրելու համար:





Աշակերտներու Տպաւորութիւններ:

Երկուշաբթի 20 Փետրուար 2023-ին մեր վարժարանի միջնակարգ դասարանի աշակերտները իրենց դաստիարակներուն ընկերակցութեամբ այցելեցին Արամէ Արուեստի պատկերասրահ: Հոն ծանօթացանք հայ արուեստագէտներու նկարչական զանազան աշխատանքներուն եւ մեր միտքերը հարստացուցինք անոնց գունագեղ գործերով: Օգտաշատ այցելութիւն մըն էր որմէ շատ բան քաղեցինք:

Սեւակ Խապայեան
Միջն. Ա. Դասարան

Երկուշաբթի 20 Փետրուար 2023-ին Միջնակարգ դասարաններու աշակերտներով այցելեցինք Արամէ Արուեստի պատկերասրահ, ուր ցուցադրուած էր հայրենի արուեստագէտներու գեղակերտ նկարչական կտաւներ: Այնտեղ՝ պատասխանատուներէն մին, կարճ բացատրութիւններով մեզ լուսաբանեց իւրաքանչիւր գծապատկերի բնաբանի մասին: Ճոխ գիտելիքներով վերադարձանք դպրոց: Հաճելի փորձառութիւն մըն էր:

Նենսի Ֆայատ
Միջն. Բ. Դասարան

Երկուշաբթի 20 Փետրուար 2023-ին մեր վարժարանի միջնակարգ դասարանի աշակերտներով ու դաստիարակներով այցելեցինք Արամէ Արուեստի պատկերասրահ: Սրահը լեցուն էր պատկերազարդ կտաւներով: Աչքիս առջեւ պարզուեցան սքանչելի, գեղեցիկ ու երփներանգ գոյներով ստեղծագործութիւններ, որոնք գծուած ու ներկուած էին հայրենի տաղանդաշատ գեղանկարիչներու կողմէ: Ուրախ եմ, որ առիթը ունեցայ այցելելու պատկերասրահ ու վայելելու հիանալի ու գեղեցիկ ստեղծագործութիւններ:

Ալեքս Գոճայեան
Միջն. Գ. Դասարան



Մենք Արցախի հետն ենք:

Յունուար 2023ին, մեր վարժարանի Միջնակարգ Ա. Բ. Գ. դասարանի աշակերտները, 25 ուսուցչակազմը եւ տնօրէնութիւնը մասնակցեցան Պուրժ Յամուտի Արին Կեդրոնին դիմաց կազմակերպուած՝ Արցախին համար զօրակցահաւաքին: Մենք միշտ Արցախին հետն ենք եւ Արցախը մեր սրտին մէջ է:



Աշակերտներու Տպաւորութիւններ:

Զորեքշաբթի 25 Յունուար 2023-ին Վահան Թէքէեան Միջն. վարժարանի աշակերտները մաս կազմեցին Պուրժ Յամուտի Արին կեդրոնին դիմաց կազմակերպուած Արցախի ապաշրջափակման աշակերտական զօրակցահաւաքին, զօրակից դառնալու արցախահայութեան: Յաի, հայրենասիրութեան եւ անօգնական ըլլալու խառն զգացումներ ունեցայ. Քաղաքակիրթ աշխարհին անարդար ըլլալուն վրայ բարկացայ: Ինծի պէս հարիւրաւոր Արցախցի երեխաներ բանտարկուած են սեփական տան մէջ: Սփիւռքը պատրաստ է զանազան միջոցներով անոնց զօրակցելու յոյս ներշնչելու:



Պերժ Գոմպէճեան
Միջն. Ա. Դասարան

Ազերիներու կողմէ Արցախի շրջափակման դէմ պայքարելու համար, Զորեքշաբթի 25 Յունուար 2023-ին, , Արցախահայութեան զօրակից կանգնելու պատրաստակամութեամբ, Պուրժ Յամուտի Արին կեդրոնի դիմաց աշակերտական զօրակցահաւաք մը կազմակերպուեցաւ, որուն մաս կազմեց նաեւ մեր վարժարանի Միջնակարգի աշակերտները: Արցախի ու Հայաստանի դրօշները, ինչպէս նաեւ զանազան լոգունգներով պաստառներ բարձրացուցինք, համայն աշխարհին ցոյց տալու, թէ մենք մեր իրաւունքներուն պահանջատէր ենք:

Սելենա Քէօսէեան
Միջն. Բ. Դասարան

Արցախի ապաշրջափակման աշակերտական զօրակցահաւաքին, որ տեղի ունեցաւ Զորեքշաբթի 25 Յունուար 2023-ին, Պուրժ Յամուտի Արին կեդրոնին դիմաց, որուն ներկայ գտնուեցանք մեր վարժարանի Միջնակարգի աշակերտներով զգացի, որ մենք՝ Լիբանանահայերս միասնական եւ հայրենասէր ենք: Մենք պատրաստ ենք ընել ամէն ինչ մեր հայրենիքին համար: Այնտեղ հպարտ զգացի որ հայ եմ եւ կը պայքարիմ: Լոգունգներու պաստառը բռնած կը դիտէի շուրջս: Ժողովուրդին հայեացքին մէջ հայրենասիրութիւն, ոյժ եւ պայքարի ոգին տեսայ ու զգացի:

Ալիք Ազնաւուր
Միջն. Գ. դասարան

Մեր դաս-խաղի վրայ հիմնուած գործունէութիւնները:



Email: info@vahantekeyan.com
Website: www.vahantekeyan.com
Facebook: Vahan Tekeyan School in Lebanon
Instagram: [vahan.tekeyan](https://www.instagram.com/vahan.tekeyan)
Phone number: 01/260525 - 01/260574